



Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

*Մեր կոնտակտները՝*

*Պաշտոնական կայք՝ <http://www.armin.am>*

*Էլ. փոստ՝ [info@armin.am](mailto:info@armin.am)*

# **ԵԶՆԻԿ Բահանա ՊԵՏՐՈՍՅԱՆ**

**Դոկտոր Աստվածաբանության**

## **ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ**

**Մաս Ա (Սկզբից մինչև 1441 թ.)**

**«ՀԱՂԲԱՏԱՎԱՆՔ» Բարեգործական Միություն  
1990**

**Fr. Yeznik Petrossian**  
Doctor of Theology

## A HISTORY OF ARMENIAN CHURCH

Part 1 (From the beginning till 1441)

«HAGHBATAVANK» BENEVOLENT SOCIETY  
1990

### ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Հայ եկեղեցու պատմությունը պատմությունն է հերոսական մի ժողովրդի, որ քրիստոնեությունը դարձել է իր բարախուն սիրտը և իր կյանքի գոյն դարեր շարունակ պահպանել է այն օտար արհավիքներից:

Ա. Հայ եկեղեցու պատմությունը սկսվում է առաքելական քարոզչության տարիներից: Այն կարելի է բաժանել չորս շրջանների:

ա. Հին շրջան /Ա-Բ դարի կես/. Սա Հայ եկեղեցու կազմավորման, ազգայնացման, դավանարանական դիրքորոշման և իր գոյության ու ուղղափառության համար մղ ած պայքարի շրջանն է:

բ. Միջին շրջան /Բ-Բ դարի կեսից մինչև 1441 թվականը/. Հայաստանում ազգային պետականության վերականգնմամբ Հայ եկեղեցին թևակոխում է մի նոր շրջան: Մաղում է աստվածաբանական միտքն ու եկեղեցական մշակույթը: ԺԱ դարից սկսած արտագաղթի հետևանքով Հայ եկեղեցու սահմանները ընդարձակվում են գեպի Միջագետք, Ասորիք, Փոքր Ասիա, Ղրիմ, Լեհաստան և այլն: Եթե Հին շրջանում Հայ եկեղեցու սահմանները որոշվում էին Հայաստանի վարչական սահմաններով, ապա այս շրջանում Հայ եկեղեցին դառնում է ոչ միայն Հայաստան աշխարհի, այլ նաև ողջ Հայության եկեղեցին, նրա սահմաններում ընդգրկվում են նաև Հայ զաղթավայրերը: Շուրջ չորս դար Հայոց կաթողիկոսարանը հաստատվում է Կիլիկիա: Այս շրջանում Հայ եկեղեցին պատմական բանակցություններ է վարում Կ. Պոլսի Տիեզերական պատրիարքություն, Հռոմեա-Կաթոլիկ, Ասորի և Վրաց եկեղեցիների հետ:

գ. Նոր շրջան /1441 թվականից մինչև ԺԲ դարի սկիզբը/. 1441 թ. Հայ եկեղեցու Հայրապետական Աթոռը վերադառնում է Ս. Էջմիածին: 1453 թվականին Կործանվում է Բյուզանդական կայսրությունը: Միջեկեղեցական հարաբերությունները, որոնք նպատակ ունեին ապահովել քրիստոնյա պետությունների ու ազգական օգնությունը, դառնում են անհմատ: 1461 թվականին Կ. Պոլսում հիմնադրվում է Հայ պատրիարքություն, որը կարևոր դեր է խաղում Հայ եկեղեցու, ինչպես նաև Հայ ժողովրդի կյանքում, որպես Օսմանյան կայսրության տարածքում գտնվող Հայ ժողովրդի կրոնական և ազգային գործերի ղեկավար մարմին: Քաղաքական անրաբենպաստ պայմանների պատճառով ԺԲ դարի վերջից մինչև ԺԲ դարի երկրորդ քառորդը Հայ եկեղեցին ապօռում է խաղարի և ամրության տարիներ: Մովսես Գ. Տաթևացու (1629-1632) և նրա աշակերտների անձնվեր գործունեության շնորհիվ Հայ եկեղեցին սկսում է ապրել զարթոնքի և լուսավորության մի նոր շրջան:

դ. Նորագույն շրջան /ԺԲ-ի դարեր/. 1828 թվականին Արևելյան Հայաստանի Ռուսաստանի հետ միացումով Հայ եկեղեցու առջև բացվում են գործունեության պայման նպաստավոր պայմաններ: ԺԲ դարի երկրորդ կեսին Ս. Էջմիածինը և Արքաց զառնում են գիտական կենտրոններ: Ա Համաշխարհային պատերազմը և Սեծ եղեռնը, սակայն, քանդեցին Հայ եկեղեցու սյուները: Մնացին միայն Հիմքերը, որոնց վրա, մինչև այսօր, կառուցվում են նոր սյուներ: 1920 թվականին Արևելյան Հայաստանում հաստատվում են խորհրդային

## ԵԶՆԻԿ Քահանա ՊԵՏՐՈՍՅԱՆ

**Կարգեր:** Մեծ Եղեռնի հետևանքով առաջանում է արդի Հայ Սփյուռքը: Հայ Եկեղեցին կանգնում է նորանոր ու բազմապիսի խնդիրների առջև: Հայ Եկեղեցու կանգնում՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածնը, դառնում է աշխարհով մեկ ապրածված Հայությանը Մայր Հայաստանին կապող Հիմնական կամուրջը:

\*  
\* \*

**Բ. Խոսելով Հայ Եկեղեցու պատմության սկզբնաղբյուրների մասին, պետք է նշել,** որ թեև դրանք սակավաթիվ չեն, սակայն բավարար էլ չեն, Հստակ պարզաբանելով Համար զանազան մութ և երկրայական հարցեր: Ինչ խոսք, հնում բավարար չափով ազրյուրներ եղել են, սակայն պարսկական գրադաշտական նության կրակը, երկհարյուրամյա արաբական լուծը, սելջուկների, մոնղոլների, թուրքերի և այլոց հրոսակային սովատակությունները մեծ մասը: Փրկվել են միայն այն պատառիկները, որոնք բախվելով Հայոց աշխարհի բարձրաբերձ լեռներին, վայր մեր ընկել և իրք սրբազն մասունք հավաքվել ու պահպանվել սուրբ կողմանը: Եթե այս հավաքվել սուրբ և լուսական համականների կողմանը: Շատ քիչ սկզբնաղբյուրներ են պահպանվել Հատկապես հին շրջանի վերաբերյալ: Այսուամենանիվ, պահպանված այդ նշխարներն էլ Հնարավորությունն են տալիս բավական ճշգրիտ կերպով պատկերացնելու Հայ Եկեղեցու պատմության զարգացման ուղին, Հիմնական երեսությունները:

\*  
\* \*

**Գ. Ազերի քան երկու հարյուր տարի է, ինչ Հայ և օտար գիտնականները ուսումնասիրում են Հայ Եկեղեցու պատմությունը: Հրատարակվել են բազմաթիվ մենագրություններ և ձեռնարկ-դասագրքեր, որոնցից Հիշատակության են արժանի հետևյալները:**

**Ա. Վրդ. Առարտեանց, Պատմութիւն Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցւոյ, Յերբուադէմ, ի տպարանի սրբոց Թակովքեանց, 1872:**

**Յուսիկ Վրդ. Առամիսեան. Հայաստանեայց Առաքելական Ս. Եկեղեցւոյ պատմութիւն, Կաղարշապատ, ի տպարանի Սրբոյ Կաթողիկէ Էջմիածնի, 1884: Կարապետ Ա. Վրդ. /Տէր-Մէրտչեան/. Հայոց Եկեղեցւոյ պատմութիւն, Մասն Ա. Վաղարշապատ, տպարան Մայր Աթոռոյ Ս. Էջմիածնի, 1908:**

**Ալբար/աՀամ/ Զամ/ինեան/. Հայոց Եկեղեցւոյ Պատմութիւն, Նոր-Նախիջևան, տպարան Ս. Աւագեանի, Ա մասն 1908, Բ մասն 1909:**

**Գևորգ-Մեսրոպ. Պատմութիւն Հայ Եկեղեցւոյ, Կ. Պոլիս, "Փարոս" Հրատարակչական ընկերութիւն, Ա Հատոր 1913, Բ Հատոր 1914:**

**Ալագարքիս արքեպիսկոպոս. Օքմանեան Աղգապատում-Հայ Ուղղափառ Եկեղեցւոյ անցքերը սկիզբէն մինչև մեր օրերը յարակից ազգային պարագաներով պատմուած, Բ տպագրություն, Պէյրութ, Ա Հտ. 1959, Բ Հտ. 1960, Գ Հտ. 1961:**

**ՃԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ**

**ՃԱՅՆԻԿԻ Ա. Իշտորայ Արմենական Եկեղեց Կամուրջ 1900.**  
*Dulaurier E., Histoire, dogmes, traditions et liturgie de l' Église Arménienne Orientale, Paris 1855.*

**Ճայավերդն Ա. Արմենիա և Արմենացներ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի առջև 1874.**  
*Issaverdens J., Armenia and the Armenians, t. 2, History of the Armenian Church, Venice, Armenian monastery of St. Lazarus 1875 (t. I, 1874).*

**Ճայանդն Ա. Ալբանիայի պատմություն 1897.**  
*Manandian A., Beiträge zur albanischen Geschichte, Leipzig 1897.*

**Ճայենիզ Է. Արմենիայի պատմություն 1900 Տարբաշի առջև 1908.**  
*Tournebize E.C., Histoire politique et religieuse de l' Arménie depuis les origines des Armeniens jusqu'à la mort de leur dernier roi (l'an 1393). Paris 1910 (Paris s.d. Rev. Or. Chrét. jusqu'en 1908).*

**Ճայառակոյ Ա. Պաշանձրեան, Իմրուտ և օրգանատու տիկ Արմենիայի Եկեղեցի ամենաշատ առջև 1966.**  
*Daucasctvnoy Ա. Պաշանձրեան, "I'mrusiς և օրգանատու տիկ Արմենիայի Եկեղեցի ամենաշատ առջև 1966.*

**Նկատի պետք է ունենալ, որ Հայ Եկեղեցու պատմության վերաբերյալ Հրատարակված ուսումնասիրությունների և ձեռնարկների մի զգալի մասը դրված են կանխակալ և միակողմանի և բատեցումներով, որոնց հիմնական նպատակն է եղել ոչ թե գիտական և անապառ պատմություն գրել, այլ մի կողմից մերժել Հայ Եկեղեցու առաքելական պատմությունն ու ուղղափառությունը, մյուս կողմից ցույց տալ, թե Հայ Եկեղեցին անցյալում ենթակա է եղել կամ բյուզանդիայի, կամ Հռոմի Եկեղեցուն: Օրինակ.**

**Հ. Վ. Լազարի Կարենը խնդիրներ Հայ Եկեղեցւոյ պատմութեան, Վենետիկ-Ս. Ղազար 1927:**

**Հ. Ա. Կողեանի, Հայոց Եկեղեցին մինչև Փոլունեան ժողովը, Բեյրութ 1961: Karapet Amatuni, L' Eglise Arménienne et l' Catholicité, Venice 1978.  
Nerves Setian, Eine Rechtfertigung der Armenisch-Unierte Armenischen Kirche der Geschichte (Die Kirchen Armeniens, Stuttgart 1978).**

\* \* \*

**Հայ Եկեղեցու պատմության գրքերը հիմնականում Հրատարակվել են նախահեղափոխական շրջանում: Այս տարիների ընթացքում Հայունաբերկվել են նոր սկզբնաղբյուրներ և ճշտվել Հայ Եկեղեցու պատմության զանազան հարցեր, գեմքեր, գեպքեր և թվականներ: Այս ամենը, ինչպես նաև այսօրվա գիտության պահանջները, Հրամայական են դարձնում Հայ Եկեղեցու պատմության մի նոր շարադրանք:**

**Սույն ձեռնարկը նախատեսվում է իրբ գասագիրը: Այն բաժանված է դասերի: Յուրաքանչյուր դասի վերջում դասարանական քննարկումների Համար տրված է պարտադիր ընթերցանության գրականության ցանկ:**

**Սույն Հատորը ընդգրկում է Հայ Եկեղեցու պատմության Հին և Միջին շրջանների համառու շարադրանքը:**

**Ցանկանում եմ շնորհակալություն Հայտնել գերաշնորհ Արքն արք. Մատուկյանին, գոկուր պարն. Հրաշ Բարթիկյանին և բանասիրական գիտ. Թեկնածու պարն. Արմեն Տեր-Ստեփանյանին, որոնց ընթերցեցին սույն աշխատության ձեռագիրը և արեցին օգտակար դիտողություններ ու սրբագրություններ:**

### Դաս Ա. ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅԱՆ ՔԱՐՈՉՉՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Հայ եկեղեցու պատմության հնագույն շրջանի վերաբերյալ պատմական տեղեկությունները սակավաթիվ են: Հիմնական պատմառն այն է, որ Հայերեն այրուքներ ստեղծվել են դարի սկզբին, երբ և ծնունդ է առել Հայ ժամանագրությունը՝ իր բազմազան ճյուղերով: Առաջին պատմական երկերը, բնականարար գրի են այդ ժամանակ: Առաջին դարերի Հայ եկեղեցու պատմությունը, իրեն Սրբազն Ավանդություն, բանավոր կերպով ավանդվել է սերնդից սերւնդ և ե դարում միայն գրի առնվել Հայ պատմագրական և վարքագրական գրականության մեջ: Սրբազն Ավանդությունը չպետք է շփոթել առասպելի հետ: Այն ունի պատմական հիմք, որոշ ժամանակ բանավոր կերպով պահպանվել է եկեղեցում, հավանարար կրել է որոշ գործություններ, զարդարվել հրաշապատումներով և ապա, պատմա առիթով, գրի է առնվել: Սրբազն Ավանդության պատմական հիմքը չի կարելի որանալ:

Համաձայն Հայ եկեղեցու Ավանդության, որն աչքի է ընկնում իր պատմական տվյալներով, Հայոց հոգի վրա քրիստոնեության սերմերը ցանվել են դեռ առաքելական շրջանում: Մի շարք պատմական տվյալներ և վկայաբանություններ խոսում են այն մասին, որ Հայաստանում քրիստոնեությունը քարոզել են Ս. Թաղենու և Ս. Բարդուղիմենու առաքյալները, որոնք և նահատակվելով Հայոց Սահապորի թագավորի հրամանով, դարձել են Հայաստանի եկեղեցու հիմնադիրները:

#### ա. Ս. Թաղենու առաքյալի Հայաստանում քարոզելու և նահատակվելու ավանդությունը

Փակասոս Բուզանդը իր պատմությունը սկսում է Հետեյալ բառերով. «Թաղենու առաքյալի քարոզությունից և նրա մարտիրոսական վախճանից մինչև Գրիգորի վարդապետության վերջն ու նրա վախճանը, և առաքելասպան Սահատրուկ թագավորից մինչև Տրդաս թագավորի ակամա հնազանդվելը . . . ուրիշների հողմից արդեն գրվել են»: Նման որեւէ գործ Հայերեն լեզվով մեզ չի հասել: Այդ պատմառով էլ երկար ժամանակ Բուզանդի վերոհիշյալ վկայությունը համարվել է կենցիք: Սակայն, վերջերս Հայտնարերված Արքաթանգեղոսի ասորերեն Համառու թարգմանության մեջ պահպանվել է Հետեյալ արժեքավոր վկայությունը. «Հայաստանի թագավոր Սահատրուկի օրոք Լերեն, Թաղենու անվանվածը, այսինքն Աղդան, եկալ /Հայաստան/. նա նրանց քարոզեց Հավատի խոսքը, և Սահատրուկը՝ Արքարի քրոշ տան, նրան ընդունեց: Եթե Հայոց հշխանները իմացան այդ, Հավաքվեցին, գնացին նրա մոտ և ասացին. Դու իրավունք չունես քո Հայերի աստվածներին լքելու: Եվ նա կատարեց նրանց կամքը և վերադարձավ իր նախկին մոլորության: Ինչ վերաբերում է Աղդային, նրան քարձարցրին մի ըլքի վրա և այնտեղ էլ նրանց կողմից նահատակվեց և թաղվեց Հավատացյալ մարդկանց կողմից: Երկար ժամանակից հետո մահացավ Սահատրուկը: Նրանից հետո թագավորեց Արտախեցը /Արտախեց/»:

Համաձայն ասորական և Հայկական գրավոր պահնդությունների, որոնք

կազմագործել են Բ-Գ դարերում և իրենց վերջնական ձևը ստացել Դ-Ե դարերում, Քրիստոսի աշակերտներից Թագենոս /ասորական անվանաձևով՝ Աղդան/ դալիս է Եպիսկոպոս, բժիշկում Արքար թագավորին, եպիսկոպոս ձեռնադրում Աղդային /Հայկական ազգություններում այս անվանաձևը շփոթվել է Աղդա անվանաձևի հետ/: Մեզ հասած բոլոր զգբարելերը մինչև այստեղ Համաձայն անվանաձևի մեջ միան Հետո: Թագենու կամ Աղդի առաքյալի հետազ դրժունակայացության վերաբերյալ, սակայն, ազգությունները զգալիորեն տարբերվում են միայնակցեց:

Լարուդանայի անունը կրող Աղդելի վարդապետության ասորական ընդարձակ խմբագրությունը, որը ձեռագործել է Գ դարում և վերջնական տեսքը ստացել Դ դարում, նշում է, թե Թագենու առաքյալը վախճանվել և թաղվել է Եպիսկոպոս Հայերեն ոսկեզրայան թարգմանության մեջ կարդում ենք, որ Թագենու առաքյալը Եպիսկոպոսը վախրակուց հետո աելավ գնաց զեպի Արքելք՝ քարոզելու Քրիստոսի Ավետարանը: Անշուշտ կարելի է մտածել, թե այս տարբերակը հայ թարգմանչի միտումնավոր կերպով արգած գործն է: Սակայն այդ զեպում Հայ թարգմանչը չէր ամի աելավ գնաց զեպի Արքելք», այլ կասեր՝ «եկագ Հայաստան»: Բարեխախտարար պահպանվել է «Աղդայի վարդապետության» ասորերեն բնագրի մի այլ՝ ավելի հին խմբագրության Հատված, ըստ որի Աղդան Եպիսկոպոսից անցնում է Մոփք, ուր և նահատակվում է: Բացահայտ է, որ գոյաբյուն են ունեցել այս պահնդության մի քանի տարբերակներ և Հավանական այն է, որ ասորական ընդարձակ մի քանդարձությունը անցնում է Թագենու մեջ ապա ավանդության մի քանդարձությունը, թե այս գոյաբյունը կամ անհաջող է Եպիսկոպոսից հետո առաջանակ եղանակից են եկեղեցին, շրջակա եկեղեցին մեջ առանձնահատուկ տեղ դրավելու ձգտումով:

Գալով բուն Հայկական ազգություններին, դրանք միաբերան վկայում են, որ Թագենու առաքյալը Եպիսկոպոսից անցել է Հայաստան, քրիստոնյա դարձրել բազմաթիվ Հայերի, այդ թվում նաև Սանդուխտ արքայադատերը: և ապա Սահատրուկ թագավորի հրամանով, մյուս քրիստոնյաների հետ, նահատակվել Արտաղ գավառի Շավարշան գյուղաքաղաքում:

#### բ. Ս. Թաղդուղիմենու առաքյալի Հայաստանում քարոզելու և նահատակվելու ավանդությունը

Մովսես Խորենացին Թագենու առաքյալի մասին խօսելուց հետո պահելանու է. «Բայց Հայերին վիճակից նաև Բարգուղիմենու առաքյալը, որը և նահատակվեց մեզ մոտ՝ Արքաթան քաղաքում» /Բ լդ/: Ե դարում գրի առնված «Վկայութիւն» սրբոյ առաքելոյն թարգողութեան երկի /Սոփերք ԺԲ-5-30/ Համաձայն առաքյալը ութ պարսկի Հետեօրդների հետ Սահատրուկի թագավորության 29-րդ տարում Պարսկաստանից գալիս է Հայոց Գողթն գավառը, այնտեղից անցնում Հայաստանի կենտրոնական մասը. Արտաշէ բլի մտ Հանդիպում Քրիստոսի տասներիու առաքյալներից Հուգա Հակոբեակին, որից հետո գնում է Լեռ և Զարեանդ գավառները և ապա Հայոց Ուրբիանու քաղաքը: Այնուհետև պատմում է թագավորի բույր Ողուշու և Ցերենտիոս Հազարակետի քրիստոնյա գառնալու և Սահատրուկի հրամանով նրանց ու Հազարակետի քրիստոնյա գառնալու և Սահատրուկի հրամանով նրանց ու

առաջյալի նահատակության մասին: Առաջյալի՝ գողթն զավառի քարոզության մասին խոսում է նաև Այունյաց նահանգի պատմիչ Մտեփանոս Օրբելյանը /Գ. Զ/։ Նրա մոտ կան մի շարք պատմական մանրամասնություններ, որ բացակայում են վկայարանությունում, ինչպես օրինակ Գողթնի առաջին եպիսկոպոսների առողջ իշխանների անունները և այլն: Երեսում է, որ Օրբելյանը բացի Բարդուղիմեան առաջյալի վկայարանությունից, օգտվել է նաև այլ պատմական աղյուսներից, որ մեծ չեն հասել: Հատկապես Հիշուակության արժանի է այն պարագան, որ ըստ Օրբելյանի Գողթնի առաջին եպիսկոպոսները /Կումսի/ Բարելաս Խորսիկի/ պարսկիներ են: Եթե Օրբելյանը կամ աղյուսը հորինած լիներ այդ ամենը, պատ եպիսկոպոսները ոչ թե պարսիկ, այլ հայ պիտի լինեին: Օրբելյանի կողմէց դրանց պարսիկ համարդիլ վկայում է պատմական Եշմարտության մասին: Հավանաբար դրանք այն պարսիկներից էին, որոնք, Բարդուղիմեան առաջյալի վկայարանության Համաձայն, ուղեկցել էին նրան գեպի Հայոց աշխարհը: Այսպիսով երկու տարբեր աղյուսներ Հանդիսանալով նույն պատմական իրականության երկու տարբեր արձագանքները, լրացնում են միմյանց և ամրողացնում մեր պատկերացումները այդ գեպերի մասին:

#### գ. Սահատրուկ թագակորը պատմական անձ է

Վերոհիշյալ ավանդություններում հիշվող Հայոց Սահատրուկ թագավորը երկար ժամանակ համարվում էր Բ գարի վերջի /166-200/ անձնավորություն: Այդ իսկ պատճենով պատմաբաններից ոմանք մերժում էին այդ ավանդությունների պատմականությունը, ոմանք էլ այդ եղելությունները փոխազրում են գարի վերջ: Որ Սահատրուկը Հայ թագավոր է և պատմական անձ, վկայում են նաև օտար պատմիչները: Դրու Կասփոր նրան հիշում է իրեն Հայոց Վաղարշ Ա թագավորի /117-144/ հայրը /76, 9, 6/: Սահատրուկը, իրեն Հայոց թագավոր, հիշվում է նաև Արքիանուշ Պարթևականք գրքում: Արքիանուշը ժամանակակից է եղել Հադրեանու կայսեր /117-138/: Այս ևս վկայում է այն մասին, որ Սահատրուկը իրապես թագավոր է Ա դարում: Արդի պատմագիտությունը Սահատրուկի թագավորությունը զնում է 88-110 թթ.-ի միջև:

#### դ. Ոսկյանը և Սուրբիայանը

Մեզ է հասել պատմագրական երկի մի փոքրիկ հատված, ուր պատճենում է Ա դարի վերջին և Բ-դարի սկզբին Հայաստանում Ոսկյանց և Սուրբիայանց նահատակության մասին: Հեղինակը նշում է, որ այդ պատմությունները քազել է Տափանոսի /Բ դ. / մի ճառից: Տափանոսը իր Դիատեսսարոնի մեջ լայնորեն օգտագործել է պարագանուն նյութեր: Սա ցույց է տալիս, որ նա քաջատեղյակ էր առաջյաների և քրիստոնյա առաջին քարոզիչների ու նահատակների մասին իր ժամանակ գոյություն ունեցած պատմություններին: Հետեւար և նրա վկայությունները Հայաստանի քարոզիչների և նահատակների մասին ունեն մեծ արժեք: Համաձայն այս գրության Թադեոս առաջյալի աշխակունքը Ոսկյանը, հոյուսի գլխավորությամբ, առաջյալի մահից հետո պատմանում են իր աշխակունքը, որ Ա-Գ դդ.-ում Փոքր Հայքը քաջագականապես մաս էր կազմում Կապագովիլայի նահանգի և բնական է, որ այնուղ սարածված քրիստոնեությունը Փոքր Հայքի վրայով ներթափանցեր նաև Մեծ Հայք:

#### ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Դալիս Արտաշես թագավորը, սրանք մտանում են թագավորին և քարոզում Քրիստոսի աստվածության մասին: Թագավորը, զրադված լինելով պատերազմով, զնում է Արևելք՝ պատվիրելով նրանց իր վերադարձն կրկին խոսել իրեն այդ մասին: Որոշ ժամանակ անց Ոսկյանը դարձել է այդ առաջնորդ հայության կողմէց: Քրիստոնյա դարձած ալան եղիսաները հեռանում են արքունիքից և բնակություն Հայաստան Ջրաբաշ լիռան լանջին, ուր քառասունշորու տարի բնակելուց հետո նահատակվում են իրենց առաջնորդ Սուրբիասի գլխավորությամբ: Որոշ ժամանակ անց այդ վայրերում Վաղարշ թագավորը մի մեծ ավան է կառուցում և իր անունով հօղում այն Վաղարշակիբու:

Վկայարանության մեջ խոսվում է երկու հայ թագավորների մասին: Հայկական այրյուրներում հիշվող Արտաշեսը նույնացվում է տար աղյուսներում հիշվող Տիրդատանի՝ Արշակունյաց Հարստության հիմնադիր Տրդատ Ա Արշակունու հետ /66-88/: Հայութի է նաև, որ Վաղարշակիբու քաղաքը կառուցել է Վաղարշ Ա-ն /117-141/: Այսպիսով Ոսկյանց ու Սուրբիայանց նահատակությունները ընկնում են այս երկու թագավորների իշխանության տարիների միջև, որ Համբենինում է Սանատորուկի քրիստոնեական տարիներին:

Երկում հիշված Արտաշեսի պատերազմական գործողությունները Արևելքում պատմական եղելություններ են. Սովոր Խորենացին /Բ Ժ/ և Հ Հովհանոս Փլավիսը պատճենում են, որ Արտաշեսը Արևելք է գնացել 72-74 թթ. ալանեների գեպի Հայաստան կատարած արշավանքը դիմացիներու համար:

#### ե. Հայաստանում քրիստոնեության տարածմանը նպաստող նախադրյան ները

Անշուշտ գծիար է ասել, թե վերոհիշյալ ավանդությունների քանի՞ տակոս է պատմական, սակայն գրանց պատմական հիմքը մերժել չէ կարելի: Հատկապես, որ թե՛ արտաքին և թե՛ ներքին պայմանները միանդամային նպատակությունը էին Հայաստանում քրիստոնեության տարածման գործին: Այսպէս, օրինակ. Ա դարում իսկ քրիստոնեությունը լայն տարածում էր գտել Հայաստանի Հարեան երկեներում՝ Կապագովիկիայում, Օսրոենում և Աղիարենում: Վերոհիշյալ երկեների հետ Հայաստանի քաջագական, առերարկան և մշակության կապերը նպատակությունը պայմաններ կարող էին ստեղծել Հայաստանում քրիստոնեություն տարածման համար: Կարենը է նաև այն հանգամանքը, որ Ա-Գ դդ.-ում Փոքր Հայքը քաջագականապես մաս էր կազմում Կապագովիլայի նահանգի և բնական է, որ այնուղ սարածված քրիստոնեությունը Փոքր Հայքի վրայով ներթափանցեր նաև Մեծ Հայք:

Հայաստանում քրիստոնեության տարածման համար կարենը նախապայման է եղել նաև Հայաստանի քաջագիտներում Արեական գաղությունը առկայություններ, քանի որ, ինչպես Հայտնի է, առաջին քրիստոնյա քաղաքների հայության կապահապատական կարենը քաջագիտներում Արտաշատում, Արտաշատում, Վաղարշապատում, և այլուր, հրեա Համայնքները կազմության կամացիներին գլուխ առաջանալու մասին գաղութները, որոնց գլուխ

կանգնած էր դաշտի ռես:

Նկատի ունենալով այս ամենը, ցանկանում ենք կրկնել Շվեյցարիայի Հռոյն Օբխոզաքս նկեղեցու միարոպոլիտ Դամասկիսոսի հմակյալ խոսքը: «Անհնարին է պատկերացնել, թե ինչպես կարող էր քրիստոնեությունը չտարածվել Հայաստանում դեռ առաջելական դարերում, թեկուզ փոքր ժավալով»:

### Սկզբ եազբյուրներ

Լոռութեայ դիմանածի պար նուախոյ, Թուզք Արգարու յեղեալ յատրույն ի ձեռն Ա. Թարգմանչաց, ի Ա. Ղազար ի վասն Միջիթարայ ի Վենետիկ, 1888: Կամ՝ Շերամելու նուախոյ Թուզք Արգարու Թարգմանի հայոց և Բարոնութիւնի սրբոյն Բաղդի տուժելոյ, ի տպարանի տուժելուն Աթոռոյ Ա. Թակովիթանց, յերուաղեմ, 1668:

Վկարասնութիւն Թարգման առաջնութեան և գալստեան ի Հայու և Կառաստանու որ ի Թթառու Սովերի Ը, էջ 9-58:

Վկարասնութիւն առաջ առաջնութեան Էպոպոզմանի. Սովերի ԺԹ, էջ 5-30:

Առաջնութիւն Արքայի պատմություն, Թթառմ. Ա. Ա. Արքահամայնի, Երևան, Սովետական գրող, 1986, էջ 76-78, գլ. 2:

Էնու և ասութիւն ճշմարիք սովորությունների. Սովերի ԺԹ, էջ 59-60:

### Ուսումնասիրություններ

Սովորություն Ա վրա, Հայոց նկեղեցոյ պատմութիւն, Սասն Ա, Վաղարշապատ, 1906, էջ 31-34, 47-60:

Հ Ա ն ո ն Ա Ա ս ի թ ա ն ։ Արշալոյս Թթառունեութեան Հայոց, Երկրորդ տպագրութիւն, Վենետիկ - ի Ա. Ղազար, 1920, էջ 13-73:

Հ ա յ ի Ա ս ե լ ո ն ա ն ։ Ասորական աղբյուրները Հայ նկեղեցու մասին, «Եջմիածին», 1970, է 49-56, ժ-Ժ 173-180:

Խ ա ռ ո ւ հ օ ւ Ա ր ք Ա մ բ ։ Տեր-Ա թ ի ս ս հ ա ն ։ Հայոց նկեղեցու յարաքերութիւնները Ասորուց նկեղեցիների հետ, Ա. Էջմիածին, Տպարան Սայր Աթոռոյ, 1906, էջ 1-13:

### Դաս Բ. ՔՐԻՍՏՈՆԻ ԵԿԵՂԵՑԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ Ա-Գ ԴԱՄԲԵՐՈՒՄ

Հայաստանի եկեղեցու Ա-Գ դդ.-ի պատմությունը թաղված է խավարի և խորհրդավորության մեջ: Այնուամենայնիվ կան տվյալներ, որոնք խոսում են այդ եկեղեցու գոյության մասին:

ա. Գողթնի եպիսկոպոսական աթոռը

Ինչպես տեսանք, Ստեփանոս Օրբելյանի Պատմություն նահանգին Սիսական աշխատության մեջ /գլ. Զ/ պահպանված է Ա. գարում Գողթնի եկեղեցու հիմնադրման ավանդությունը, ըստ որի Ա. Բարդուրիմենու առաջյալը Կումսիին ձեռնադրում է Գողթն գավառի եպիսկոպոս: Սրան հաջորդում է Բարեկաս Խուժիկը, որից հետո Գողթնի եկեղեցին Սուշե անունով մեկին ուղարկում է ձեռնադրվելու Թաղեի Աթոռից: Սուշեն, սակայն, չի կարողանում վերադառնալ քրիստոնյաների դեմ հարուցված հայածանքների պատճառով: Նախորդ դասին նշեցինք, որ այս եպիսկոպոսների պարսիկ և ոչ թե Հայ լինելը խոսում է ավանդության պատմական հիմք ունենալու մասին:

բ. Արտազի կամ Աշտիշատի եպիսկոպոսական աթոռը

Պահպանվել է Արտազի Աթոռի մի հնագույն գավազանագիրք՝ կազմված 649 թվականին: Ստորև մեջ ենք բերում մեզ Հետաքրքրությունը աշխարհաբար Թթառմանությամբ. «Թթաղեսու առաջյալը Արշակունյաց Սահատորուկ Թթագորի ժամանակ եկավ Հայոստանի Հավարշան քաղաքը, և ավետարանական լույսով լուսավորեց այնտեղի Հավատացյալներին, իր աշակերտ Զաքարիային ձեռնադրեց քաղաքի եպիսկոպոս և ինքը զնաց Երկրի այլ կողմերում քարոզելու բոլոր հեթանոսներին: Ասվում է, թե այս Զաքարիան նահատակի է Հայոց Երգավորից, Փրկչի Համբառնալուց 42 տարի հետո:

Նրանից հետո եպիսկոպոս կարգից Զեմենուուք: Սա մոտ 4 տարի հովկեց Քրիստոնի Հավատացյաներին և վախճանվեց:

Հ ա ջ ո ր դ ե ց Ա լ ա ր դ ե կ ս է կ ս ի ս կ ո ւ պ ո ս ը: Սա 15 տարի ժողովրդին կառավարելուց հետո նահատակից բարբարուներից:

Սրան հաջորդեց Ալաշեն կամ Ալաշեքը՝ Պարսից Երկրից: Սա թաքսոնում 30 տարի տուրք ժողովրդին կառավարելուց հետո վախճանվեց:

Հ ա մ շ ե ն ե ն ե պ ի ս կ ո ւ պ ո ս ը՝ 25 տարի:

Սրան հաջորդ է հիշվում մոն Շավարշ եպիսկոպոս Աղվանից, որ շուրջ 20 տարի կառավարեց Արտազի Հոտը:

Սրանից հետո եղավ Հ ե ս ո ն գ ե ս ո ս ե պ ի ս կ ո ւ պ ո ս ը, շուրջ 17 տարի: Սա նահատակից Շավարշանում, Հռոմի Ավրելիոս կայսեր և Հայոց Վաղարշ թագավորի ժամանակ:

Սրանից հետո չկարողացանք գտնել թե ովքե՞ր հաջորդեցին Արտազի առաքելական վիճակի եկեղեցու տեսչությանը: Ասում են, թե Ա. Գրիգոր Պարքի ժամանակ կար քրիստոնեություն և տեսուչքաղաքնի և աննկատ

վայրում » /Գրաբարը տե՛ս «Արարատ» 1868, էջ 102/:

Եթե փորձենք կազմել Արտազի Արտազ գավազանադիրքը կտանանք Հետեյալ պատկերը.

Զաքարիա	-70/71
Զեմենառոս	71-75
Ատրներսէն	76-91
Մուշե	92-122
Շահեն	123-148
Շազարչ	149-169
Հևոնդիս	169/170-186/187

Վերոհիշյալ եպիսկոպոսների մասին, բացի երկուսից, այլ աղյուրներից ուրիշ ոչինչ հայտնի չէ ենք: Մուշեն ամենայն հավանականությամբ այն Մուշեն է, որին Հիշում է Օրբելյանը իրեն Գողթնի եպիսկոպոսւթյան թեկնածու, որ ձեռնադրվելու էր գնացել Ս. Թադեյի Արոռը և հալածանքների պատճառու վերադառնալ չկարողանալուց, հովվել է Ս. Թադեյի Արոռի Հավատացյալներին: Խսկ վերջին Հևոնդիս եպիսկոպոսը պատմական անձնագործյուն է /169-186//, որ նահատակվել է Հայոց Վաղարշ /186-196/ թագավորի՝ քրիստոնյաների ղեմ հարուցած հալածանքների ժամանակ:

Վերոհիշյալ գավազանագրքի Դ դարի եպիսկոպոսները նույնպես պատմական անձնագործյուններ են, սակայն ոչ թե Արտազի եպիսկոպոսներն են եղել, այլ Աշտիշտի: Կարծիքում է /Հ. Պողոս Անանյան/, որ քրիստոնյա առաջին համայնքը Հայաստանում կազմագործել է ոչ թե Արտազում, այլ Սանտրուկ թագավորի մայրաքաղաք Մեծուրքում, իսկ Մեծուրքի կործանումից հետո այդ համայնքը փոխադրվել է մոտակա Աշտիշտա: Արտազը եղել է Հայոց արքունիքի ամառանոցը միայն, և այդ է պատճառը, որ Թադեոս առաքյալի և Սանդուխտի նահատակությունը դրվում է Արտազում: Դ դարի սկզբին, երբ Ս. Գրիգոր Լուսավորիչը ձեռնադրվեց Հայաստանի եպիսկոպոս, նրա գահակալությունը տեղի ունեցավ ոչ թե Հայաստանի մայրաքաղաք Վաղարշապատում, այլ Հեռավոր Աշտիշտաում: Տարօրինակ այս եղելությունը կարող է բացատրվել հենց նրանով միայն, որ Աշտիշտաում գոյություն ուներ մի հին եպիսկոպոսական Արոռ:

#### գ. Հալածանքներ քրիստոնեության դեմ

Բ դարի վերջին Հայաստանում քրիստոնեության գոյությունը հաստատվում է նաև Տերտուղիանոսի մի վկայությամբ: Նա իր Ընդդեմ Հրեաների աշխատության մեջ /7/, գրած 197 թվականին, Գործք Առաքելոցի Բ 9 համարի առթիվ խստելիս քրիստոնեությունն ընդունող ազգերի՝ պարթեների, մեղեցիների (մարերի), փուղիացիների և կապագովկացիների կարգին հիշում է նաև Հայերին: Տերտուղիանոսի այս վկայությունը կրկնել է նաև Օգոստինոսը /Ընդդեմ Մանիք. 9/:

Քրիստոնեաների նկատմամբ Վաղարշ Բ-ի հալածանքները եղակի երևույթ չին Հայաստանում: Բ դարի վերջին և Գ դարի սկզբին Հայաստանում քրիստոնեաների ղեմ հալածանքներ են հարուցում նաև Խորով Ա/196-216/ թագավորը և նրա հաջորդները: Այդ հալածանքները նկարագրել է

Կապադովկիայի կեսարիայի Փիրմիլիանոս եպիսկոպոսը /230-268/ իր «Եկեղեցու հալածանքների պատմությունը» գրքում\*:

#### դ. Հայոց Մերուժան եպիսկոպոսի մասին

Եփսերիոս Կեսարացին, Թվարկելով Դիոնիսիոս եպիսկոպոս Ալեքսանդրացու գրությունները, Հիշում է ապաշխարության մասին մի նամակ, ուղղված Հայաստանի քրիստոնյաներին, որոնց եպիսկոպոսն էր Սերուժանը /Զ. 46, 2/: Պատմարաններից ոմանք փորձել են այս Սերուժանին համարել Փոքր Հայքի այս կամ այս քաջաքի եպիսկոպոս: Ըստ նրանց, Դիոնիսիոսի գրած նամակի պատճառը Դեկոս կայսեր /249-251/ հալածանքների հետևանքով ուրացողներին թողություն շնորհելու ինդիրն է, և քանի որ այդ ժամանակ Մեծ Հայքը անկախ երկիր էր, Դեկոսի հալածանքները չեն կարող Մեծ Հայքի վրա տարածվել: Դիոնիսիոսի նամակը, սակայն, Դեկոսի հալածանքների հետ կապված լինելուց ավելի առնչվում է նովատարանոսի հարուցած ինդիր Հետ \*\*\*: Բացի այդ, մեսանք արգեն, որ Մեծ Հայքում և եղել են հալածանքներ և հալածանքներից բխող նման ինդիրներ և բնական է որ լինեն: Անկախ այս հանգամանքից, Դիոնիսիոսի նամակը չէր կարող Փոքր Հայքի քրիստոնյաներին ուղղված լինել, նաին այս պատճառով, որ այդ ժամանակ Փոքր Հայքը ինքնուրույն վարչական միավոր չէր, այլ Կապադովկիայի նահանգի մեջ էր մտնում: Եվ երկրորդ՝ Հռոմեական կայսրության մեջ գտնվող եպիսկոպոսները կոչվում էին իրենց աթոռանիստ քաղաքների անուններով և հետևարար Սերաստիայի կամ Մելիտիների եպիսկոպոսը չէր կարող Հայոց եպիսկոպոս կոչվել, այլ Սերաստիայի կամ Մելիտիների եպիսկոպոս: Զպետք է մոռնալ նաև, որ Փոքր Հայքի քրիստոնեությունը Հունական բնույթի ուներ: Վերոհիշյալ նահատակումներով էլ պատմարանների մեծ մասը Սերուժանին համարում է Մեծ Հայքի եպիսկոպոս: Դիոնիսիոս Ալեքսանդրովացու՝ Սերուժան եպիսկոպոսի ուղղված նամակի գրության թվականը դրվում է 251-255 թթ.-ի միջեւ:

Դիոնիսիոս Ալեքսանդրացու՝ Հայոց Մերուժան եպիսկոպոսին ուղղված թուղթը ցույց է տալիս, որ Գ գարի կեսին Հայաստանում գոյություն ուներ կաղմակերպված և միջեկեղեցական շրջանակներում ճանաչում գտած եկեղեցի:

#### ե. Քրիստոնեությունը Փոքր Հայքում

\*Փիրմիլիանոսի գիրքը մեզ չի հասել: Այդ մասին կարդում ենի Մեսրոպ Մաշտոցի աշակերտ Ստեփանեսու Տարոնացու կազմական կամարայի Աթոռի զավագանաբրդում (Արարատ 1868, էջ 105) և Սովոր Խորենացու Հայոց պատմության մեջ: Ըստ Խորենացու՝ «Կապադովկական Կեսարայի Փերմելիանու եպիսկոպոսը . . . շատ գրվածքներ գրեց, որուցից մեկն է պատմությունը եկեղեցու հալածանքի . . . որ նույնպես գրում է, թե Աշխարհում էլ շատերը նահատակվեցին Խորովի ձեռնուվ, և նրանից հնատ

\*\*Նովատարանուց, Հոռմի համար ապահովությունը, Գ դարի կեսին, Տարոզում էր, թե բոլոր նախանք, ովքեր ուրացել են Քրիստոնեությունը հայածանների ժամանակ, ներման արժանի չեն և չեն կարող վերստին ծիեղեցու գիրկը ընդունվել: Նովատարանուի այս դիրիորոշումը դատապարտվում է Հոռմի 251 թ. ժողովում:

հնչպես նշվեց արդեն, Ա-Գ գարերում Փոքր Հայքը մաս է կազմել Կապադովկիայի նահանգի: Քրիստոնեությունը Կապադովկիայում, Հետևարար Կ Փոքր Հայքում մուտք է գործել դեռ առաքելական ժամանակներում:

Պլինիոսը /+144/ Տրայանոս /98-117/ կայսեր ուղղած նամակներից մեկում խոսում է այն մասին, թե քրիստոնյաները կայսրության արևելյան նահանգներում այնքան էին տարածվել, որ նրանց կարելի էր գտնել ոչ միայն քաղաքներում, այլ նաև զյուղերում և ավաններում:

Գ գարում արդեն Փոքր Հայքում գործում էին բազմաթիվ տեղական եկեղեցիներ, իրենց քահանաներով և սարկավագներով, որոց վայրերում էլ՝ եպիսկոպոսներով: Այդ ցայտուն կերպով երեսում է Մերաստիայի 40 նահանգների կտակից:

Կան նաև մի շարք այլ պատմական վկայություններ, ինչպես օրինակ.

ա. Եկսերիոս Կեսարացին /Ե, 5/ վկայում է, թե Մարկոս Ավրելիոս /160-180/ կայսեր ժամանակ Մելիտինեի լեզեռնը բաղկացած էր Հիմնականում քրիստոնյաներից:

բ. Եկսերիոս Կեսարացին, խոսելով Դիոկղետիանոսի Հալածանքների մասին, Մելիտինեի գեպերի մասին ասում է. «քանտերը, որ կառուցված էին մարդասպանների և գերեցմանագողների Համար, այդ ժամանակ լցոնեցին եպիսկոպոսներով, քահանաներով, սարկավագներով, ընթերցողներով և խոստվանողներով, այնպես որ ոչ մի պատ տեղ չմնաց դատապարտված ոճագործների Համար /Զ 6, 8-10/:

գ. Ս. Բարսեղ Կեսարացին Եկսերիոս եպիսկոպոս Սամոսատցուն ուղղած նամակներից մեկում /նամակ 95/ Հիշում է մի Հայկական զյուղ Փարգամուն անունով, որ նշանագոր էր իր հոչակագոր մարտիրոսներով և այն բազմամարդ Հավաքույթներով, որ լինում էր այստեղ ամեն տարի:

\* \*

Գ դարի վերջին տասնամյակներում արդեն քրիստոնյաները այնքան էին բազմացել Հայաստանում, որ Գ դարի վերջին և Դ դարի սկզբին քրիստոնեությունը առանց մեծ դժվարությունների, բնական ընթացքով դարձավ պետական կրոն:

### Սկզբնապեյութներ

Արտագի Աթոռի գալականագիրը, "Արարատ" 1868, էջ 102-104:

Կեսարիայի Աթոռի գալականագիրը, "Արարատ" 1868, էջ 104-105:

Դիմիկոս Ամենանորագության Թուղթ վասն Ապաշխարության առ Մեհրութան Եպիսկոպոս Հայոց Ներած. Հ. Ն. Ակինյանի, "ՀԱ", 47 տարի, 1949, Դ-ԺԲ, էջ 59-70:

Ս. Թեղողորս Սալահունիի վկայաբանությունը. Հ. Դեռնա Ալիշան Հայապատում, հ. Բ, էջ 85-87:

### Ուսումնասիրություններ

Հենակենու Գելօնը. Փաւստոս Բիւզանդ կամ Հայկական Եկեղեցւոյ սկզբնաւորութիւն. Թրգմ. Հ. Յ. Թորոսան, Վենետիկ-Ս. Ղազար 1896, էջ 159-165:

Հ. Պողոս Անանեակ, Բրիստոնեության հետմեր Հայաստանի մեջ Ա. Գրիգոր Լուսաւորչի Բարոգութենէն առաջ, Վենետիկ-Ս. Ղազար, 1979:

Երուանդ Առաք. Տէր-Մինասիանց. Հայոց Եկեղեցու յարաբերութիւնները Ասորուց

Եկեղեցիների հետ, էջ 13-18:

Հ. Շենքոթեան, "ՀԱ", Ի՞՞ տարի, 1810, էջ 265-271:

Հ. Դեռնա Ալիշան Արշակոյս . . . էջ 73-94. Է. Խալածան Բրիստոնեության յէ և յէ դարս - Նահանգակի Փոքր Հայու - Սեմունդան Եպիսկոպոս Հայոց:

Անորմ արեալ Ըստուածուածն Բրիստոնեյների հալածանեները Այլուիրում նախագրգորյան շրջանում (Ա-Գ դդ.), Եշմիածին" 1984, Ա, էջ 39-43:

Վարդակ Արքա Ըստուածուածն Բրիստոնեությունը Հայաստանում Ա-Գ դդ. և Բրիստոնեան առաջին համայնքի սկզբնափորումը Այլուիրում, Եշմիածին" 1983, Ը, էջ 22-29:

Ռուգում արեալ Փաւստիան, Հայ Եկեղեցւոյ ծագումն ու զարգացումը. "Հայունենիք" ամսագիր, 1855, էջ 26-32:

## Դաս 9. ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՊԵՏԱԿԱՆ ԿՐՈՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Գ գարի վերջին և Դ գարի սկզբին քրիստոնեությունը Հայաստանում է պետական կրոն: Այդ՝ Հայ ժողովրդի պատմության ամենանշանակալից դեպքը արդի պատմագիտության կողմից դրվում է 301 թվականին: Այդ դրույթ առաջնակարգ դեր են խաղացել Տրդատ Գ թագավորը /287-330/ և Հայաստանի առաջնակարգ դեր են խաղացել Տրդատ Գ թագավորը /301-325/:

### ա. Հայոց արքունիքի դարձը

Ե գարի Հայ պատմագրության համաձայն, երբ 287 թվականին Տրդատը հառնեական զորքի օգնությամբ վերադառնում է Հայաստան վերադրավելու իր հոր դահը, Յանապարհին Եկեղյաց գավառի երիզա ավանում, գոհաբանական զահեր է մատուցում Անահիտ շատովածուհու մեհյանին: Իր զինակիցներից Գրեգորը, քրիստոնյա լինելով, Հրամարդում է զոհ մատուցել: Այդ ժամանակ Տրդատին Հայունի է առանում նաև, որ նա իր հոր՝ Խոսրով Բ-ին սպանող Անակ իշխանի որդին է: Թե մեկ և թե մյուս «Հանցանքների» Համար Տրդատը Հրամայում է նրան ոցել Արտաշատի ստորերկրյա բանաց, որ սա հմանված էր մահապարտների Համար: Նույն թվականին Տրդատը երկու հրովարտակ է արձակում, առաջնորդ Հրամայելով Հայաստանի մեջ գտնվող քրիստոնյաների ուղերը, ձեռքբերն ու պարանոցը կապած արքունիք բերել և նրանց ունեցվածքը բռնպազվել, իսկ երկրորդով մահապատճ է սահմանում քրիստոնյաներին թաքցնողների Համար: Այս հրովարտակները ցույց են տալիս, թե որքան մեծ վտանգ էր Համարդում քրիստոնեությունը պետության և հերթանոռության Համար:

Ազդային ավանդությունը Հայաստանում քրիստոնեության պետական կրոն դառնալու երկույթը սերտորեն կապում է Ս. Հոփիսիմյանց կույսերի նահատակության հետ: Ըստ այդ ավանդության սրանք հռոմանցի կույսեր էին, որ փախչելով Դիոկղետիանոս կայսյոր Հալածանքներից գալիք են Արևելք, երկրագում Փրկչի և Խորիսին տեղերին և ապա եզեսիայի Վրայով անցնում Հայաստան ու Հաստատվում Վաղարշապատ Մայրաքաղաքի մոտ՝ հնաձնեներություն: Տրդատը, հմայված Հրիփիմե կույսի գեղեցկությունից, ցանկանում է ամուսնանալ նրա հետ, սակայն մերժվելով, Հրամայում է բոլոր կույսերին նահատակել: Հոփիսիմեն 32 թիվում Հենքերուհիներով նահատակում է քաղաքի Հյուսիս-արեկելյան կողմում, կույսերի առաջնորդ Գայանեն, երկու ընկերուհիներով՝ Հարավային կողմում, իսկ մեկը, որ հիվանդ էր՝ հնաձնում:

Այս զեղչը տեղի է ունենում 300 թվականին: Կույսերի և Հատկապես Հոփիսիմեի նահատակությունը Հոգեկան հզոր ցնցումներ է պատճեռում թագավորին, որ ջղային ծանր հիվանդություն է ստանում: Ե գարում տարածված ժողովրդական զրոյցը այդ հիվանդությունը որակում է խողակերպությամբ և Տրդատին քանդակութության մեջ պատկերում

խողակերպ: Բագավորի քույր Խոսրովիդումար մի քանի անգամ երազ է տեսնում, թե Տրդատին կարող է բռութիւն միայն բանտարկությունից, Հանդիսավորապես ընդունվում է Վաղարշապատում, նախ ամփոփում է նահատակ կույսերի անյունները, ապա 66 որ քարոզում քրիստոնեության լույսի մասին ու բժշկում թագավորին: Թագավորը և ողջ արքունիքը քրիստոնյա են գառնում, քրիստոնեությունն էլ հողակերպ պետական կրոն:

Թե իրապես ինչ դեր է խաղացել Հոփիսիմյանց կույսերի նահատակությունը Տրդատ թագավորի և արքունիքի քրիստոնյա դառնալու գործում, զժվար է Եղբարտորեն ասել: Այն Հանգամանքը, սակայն, որ նույն Տրդատ թագավորի և Ս. Գրիգոր Լուսավորչի կարգադրություններով անմիջապես երեք տաճարներ են կառուցվում կույսերի նահատակությունների վայրերում, վկայում է այն մասին, թե ինչ մեծ նշանակություն են տվել ժամանակակիցները այդ նահատակություններին:

### բ. ՀԵԹԱՆՈՍԱԿԱՆ ՄԱԺԱՐՆԵՐԻ ԿՈՐՃԱՆՈՒՄԸ

Նորագարձ արքունիքի առաջին գործն է լինում քանդել և երկրից վերացնել Հեթանոսական կրոնի մեհյանները: Այս անշուշտ զյուրին զործ չէր: Հեթանոսությունը բավականին հզոր էր և ամենուր զենքով դիմադրում էր թագավորական զորքին: Եվ մեծ զժվարությամբ միայն Ս. Գրիգոր Լուսավորչը ու Տրդատը կարողանում են Հաղթել ընդդիմադրիներին ու աստիճանաբար կործանել Տիր շատուու մեհյանը, որ զտնվում էր Վաղարշապատից Արտաշատ տանող ծանապարհին, Անահիտ դիցուու բարեկանը Արտաշատում, սպիտակափառ Բարշամինա շաստուու մեհյանը Դարանացայաց գավառի Թորդան գուլում, յաստվածերի Հայր Զես-Արամազդի մեհյանը Անի ամրոցում, Անահիտի մեհյանը Եկեղյաց գավառի երիզա ավանում, Արամազդի որդի Միհրի մեհյանը Բագաում: Գյուղում /Ներշան գավառում/ և այլն:

### գ. Ս. Գրիգոր Լուսավորչի ծեռնադրությունն ու գահակալությունը

Նորագարձ քրիստոնեությունը, սակայն, պետք է իր հովիվներն ու Հովհանները ունենար: Ս. Գրիգոր Լուսավորիչը Հանդիսավորությամբ ուղարկվում է իր Կրթավայրը՝ Կապաղովիկիայի Կեսարիա, եպիսկոպոսական ձեռնադրություն ստանալու: Կեսարիայի եպիսկոպոս Նելոնդը, Կապաղովիկիայի բազմաթիվ այլ եպիսկոպոսների հետ միասին, Ս. Գրիգոր Լուսավորչին ձեռնադրում է Հայաստանի եպիսկոպոս: Ներոնդ եպիսկոպոսը, ներկա բոլոր եպիսկոպոսների հավանությամբ, Հանձնաբարում է Սեբաստիայի Պետրոս եպիսկոպոսին ընկերանալ Ս. Գրիգորը Լուսավորչին և վերջինիս գահակալության արարողությունը կատարել Հայաստանում: Հատկանշական է, որ զահակալության արարողությունը կատարվում է ոչ թե Հայաստանի մայրաքաղաք և Ս. Գրիգոր Լուսավորչի աթոռանիստ Վաղարշապատում, այլ Հեռավոր Աշտիշատում, ուր գնալու համար նրանք ստիպված էին մեծ շեղում

կատարել Յանապարհը: Այս երկույթը բացատրվում է միայն նրանով, որ Աշտիշատում գոյություն ուներ արդեն մի հին եպիսկոպոսական աթոռ:

Դ. Աշտիշատի, Բագավանի և Ս. Էջմիածնի եկեղեցիների կառուցումը

Աշտիշատում Ս. Գրիգոր Լուսավորիչը կործանում է Վահագնի, Անահիտի և Աստիկ-Ափրոդիտեի մեջյաները: Իննակի՞շ կոչված վայրում ամփոփում է Հունաց երկրից իր հետ բերած Հովհաննես Մկրտչի և Աթանագինե վկայի մասունքները և մի վկայարան կառուցում այդ գերեզմանների վրա, պատվիրելով, որ ամեն տարի Հավաքվեն այդտեղ սուրբերի հիշատակը տանելու համար: Ս. Գրիգոր Լուսավորիչը մի եկեղեցի է կառուցում նաև Աշտիշատում, Ս. Երրորդություն անունով սեղան կանգնեցնում, մկրտության ավագան շինում ու մկրտում է իրեն ուղեկցող իշխաններին, զորքին և բազմաթիվ նորադարձների:

Աշտիշատից Լուսավորիչը Բագրեանդի վրայով ուղեկորժում է գեղի Այրարատ: Տրդատը իր արքունիքով ընդուած է գնում և Բագավան Այրարատ: Տրդատը դիմավորում Հայաստանի հովանաբատին: Ս. Գրիգոր գյուղաքաղաքում դիմավորում Հայաստանի հովանաբատին: Ս. Գրիգոր Լուսավորիչը այստեղ ևս ամփոփում է Հովհաննես Մկրտչի և Աթանագինեի մասունքների մնացյալ մասը և գրանց վրա վկայարան կառուցում ու սեղան հիմնում, և պատարագ մասուցում և ամսօրյա պահեցողությամբ հիմնում, և պատարագ մասուցում և ամսօրյա պահեցողությամբ նախապատրաստվելուց հետո մկրտում Ծրատին, արքունիքի անդամներին և բյուրագոր նորադարձների: Պատվիրում է միաժամանակ, որ ամեն տարի նավասարդի օրը, որ Բագավանում տոնվում էր Ամանորի շաստծու՝ Հյուրընկալ Վանատուրի տոնը, Հետայրու տոնեն Ս. Հովհաննես Մկրտչի և Ս. Աթանագինեի հիշատակներ:

Վաղարշապատ վերադարձին Ս. Գրիգոր Լուսավորիչը ձեռնարկում է Հայաստանի Մայր Տաճարի Կաթողիկե եկեղեցու կառուցումը, համաձայն մի տեսլիքի, ըստ որի Աստուծո Սիսածին Որդին իշխում է երկիր և Հրեղեն մուրճով Հարգածելով գետնին ցույց տալիս այն վայրը, ուր պիտի կառուցվեր հշման Ս. Սեղանը:

#### Ե. Պատերազմ հանուն քրիստոնեության

Նորադարձ հայ պետությունը շուտով ստիպված է լինում պաշտպանելու քրիստոնեությունը Հռոմեական կայսրության դեմ: Եվսեբիոս Կեսարացին վկայում է, որ Մաքսիմինոս Դայա կայսրը /305-313/ "պատերազմ Հայտարարեց արմեններին, այն մարդկանց, որոնք ի սկզբան բարեկամ և նիդակակից էին Հռոմայիցիներին: Եվ որովհետեւ նրանք քրիստոնյաց էին և շերմեռանդ պաշտում էին Աստծուն, ուստի աստվածատյացը ջանաց նրանց բռնությամբ ստիպել, որ դառնան կուտքերի և դևերի պաշտամունքին: Դրանով նա բարեկամին ատելի դարձեց, դաշնակցին թշնամի . . . Արդ նա հենց ինքն իր բանակի հետ, արմենների գեմ պատերազմելիս, ջախջախվեց" /Թ. 8,2/:

Վերոհիշյալ վկայությունից պարզ է դառնում, որ Մաքսիմինոս կայսրը Հայաստանի վրա հարձակվել է իր կյանքի վերջին օրերին՝ 313 թվականին:

Հետեւքար կարելի է ասել, որ շուրջ 10 տարվա ընթացքում քրիստոնեությունը այնպիսի խոր արժատներ էր գցել Հայաստանում, որ հանուն նոր կրոնի հայերը ընդառաջ են գնում մահվան զենք վերցնելով հզոր Հռոմեական կայսրության դեմ:

#### Սկզբնագրյուրներ

Առավելանունը, Պատմություն Հայոց, Բարգմ. Արամ Տեր-Ղևոնդյանի, Երևան, Սովորական գրող, 1977:

Առվելան Ապահովնեան, Պատմություն Տարենոյ, աշխ. Աշ. Աբրահամյանի, Երևան, 1941, էջ 74-116:

#### Ուսումնասիրություններ

Հենգակը, Փաստու . . . , էջ 144-158:

Կորակիմ Ա. Արք. Հայոց նվերեցոյ պատմություն, էջ 60-81:

Հակոբ Մահմանյան Եղիշե, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակություն, Երևան, 1978, էջ 120-140 - Ծրդան Գ և Քրիստոնեության տարածումը Հայաստանում:

Հ. Ալիքիսն Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ 219-249, "ՀԱ", ԿԳ տարի, 1949, Դ-ԺԲ, էջ 3-58:

Հ. Պառ Անահիտն Ս. Գրիգոր Լուսաւորիչ ձեռնադրութեան թուականը և պարագաները, Վենետիկ - Ս. Ղազար, 1960:

Գարուժ Արև Լամարան Հայ նվերեցն Դ տարի Ա կեսին, Ս. Էջմիածնի Հոգևոր ծեմարանի դիպումային պարտածո, մեթեսագիր. Ս. Էջմիածնի, 1982, էջ 21-32, գլուխ Գ Գրիգոր Լուսավորիչ կյանքն ու գործունեությունը մինչև հայոց դարձը, էջ 33-51, գլուխ Դ Հայոց դարձ և Գրիգոր Լուսավորիչ ձեռնադրությունը:

Զավեն Ա. Վ. Արքումանյան Հայաստանի բրիստոնեության դարձը, "Էջմիածն", ԺԱ-ԺԲ, 12-17:

**Դաս Դ. ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ Ս. ԳՐԻԳՈՐ  
ԼՈՒՍԱՎՈՐՉԻ ՁԵՌՔՈՎ**

**ա. Ս. Գրիգորի գործակիցները, հոգևորականների պատ-  
րաստումը**

Հայաստանում քրիստոնեությունը տարածելու և ամրապնդելու, ինչպես նաև Հայ եկեղեցու նվիրապետության կազմակերպման Համար Ս. Գրիգոր Լուսավորիչը կարիք ուներ գործակից Հոգեկորականների: Կեսարիայից վերադարձին նա կար ժամանակով կանգ է առնում Փոքր Հայքի Սերբաստիա քաղաքում, որտեղից բազմաթիվ Հոգեկորականներ է բերում իր հետ Հայաստան: Բնականարար սրանց մեծ մասը Հայեր էին, թեպետև Հունական քրիստոնեության ներկայացուցիչներ: Հայաստանում քրիստոնեության տարածման զործում մեծ նպաստ են բերել նաև հույն և ասորի փարոզիչները: Այսպես օրինակ անգանապես հիշվում են իրենաբրգու՝ Սերբաստիայից, Սոփոռնիուս՝ Կապադովկիայից, Թովմասը՝ Սասաղից, Անտոն և Կրոնիդես միայնակացներ՝ Կեսարիայից, իսկ ասորի քարոզիչներից՝ Սար Ավգինը, Դանիել Ասորին՝ Աշտիշտատի երկրորդ եպիսկոպոսը, Շաղիտան Կորդվաց աշխարհում, եպիփանը Աղձնյաց և Սոփաց աշխարհում, Բասենի եպիսկոպոս Արտիթը /Դ դարի Բ կես/, անապատականության նշանավոր ներկայացուցիչ Գինուք՝ Տարոնում, Ս. Հակոբ Մծրենա Հայրապետը՝ Կորդվաց աշխարհում և այլն:

Անշուշտ Ս. Գրիգոր Լուսավորիչը չէր կարող բավարարվել միայն օտար քարոզիչների գործունեությամբ: Լայնածավալ Հայաստանի կրոնական կարիքները Հոգալու Համար անհրաժեշտ էին մեծ թիվով և Հատկապես տեղացի Հոգեկորականներ: Այս նպատակի Համար Լուսավորիչը, Տրդատ թագավորի օժանդակությամբ բացում է Հունական և ասորական դպրոցներ, կրթելու Համար երկրի մասաղ սերներն, Հատկապես քրմերի զավակներին: Ազանթագեղուը վկայում է, որ քրմերի զավակները, լրթվուկ քրիստոնեական ոգով, կարեր դեր են իսղացել Հայ եկեղեցու կազմակերպման շրջանում: Պատմիչը Հիշում է նաև նրանցից 12-ի անունները, որոնք եղել են Հայաստանի տարբեր նահանգների առաջին եպիսկոպոսներից:

Դ դարի սկզբին Հայաստանում գոյություն ուներ քրիստոնեության երկու հոսանք՝ Հունականը և ասորականը: Վերջինն տարածված էր Հատկապես Հայաստանի Հարավային նահանգներում: Մեսը կատարվում էր կամ Հունարեն, կամ ասորերեն: Այս պատճեռով էլ բազմաթիվ Հունարեն և ասորերեն բառեր են ընդգրկվել Հայոց լեզվի եկեղեցական բառացանկում, ինչպես օրինակ Հունարենից՝ թեմ, փիլոն, մետրոպոլիտ, եպիսկոպոս, Հերետիկոս, կաթողիկոս և այլն, ասորերենից՝ քահանա, արքա, ծոմ, քարոզ, շուշպա, ուրբաթ և այլն:

**բ. Հայաստանի եկեղեցու նվիրապետության կազմակորումը**

Նույն պատմիչի վկայությամբ, երբ Ս. Գրիգոր Լուսավորիչը վերադառնում է Կեսարիայից, թագավորը նրան բազմեցնում է իր արքունիքի երկրորդ գահին:

Այն ժամանակ Հայաստանը ֆեոդալական մի երկիր էր: Երկրի ղեկավարը թագավորն էր, որ միևնույն ժամանակ սեփականատերն էր կենտրոնական Այրարատ նահանգի: Թագավորի կողքին կային նախարարներ, որոնք իշխում էին իրենց պատկանող նահանգներին, կամ գավառներին, ժառանգական իրավունք և առանձին զորքով, գաւալական ենթակայության մեջ լինելով թագավորից և իրենց հատուկ զահը ունենալով արքունիքում, Համաձայն իրենց Հզորության: Տրդատ թագավորը Ս. Գրիգոր Լուսավորչին տալիս է իր արքունիքի երկրորդ գահը: Հայոնի է, որ Լուսավորչի տոհմը լայնածավալ հողեր ուներ Տարոնում: Դժվար է սաხե, սակայն, թե Լուսավորչը այդ հողերը ձեռք բերեց այն բանից հետո, եթե բազմեց արքունիքի երկրորդ գահին, թե՝ այդ պատվին նա արժանացավ նաև այն բանի համար, որ ուներ արդեն ժառանգական երկիր:

Հստակ է այն, որ Ս. Գրիգոր Լուսավորիչը Հայ եկեղեցու նվիրապետությունը կազմակերպում է Հայաստանի պետական վարչական կառուցվածքի Համաձայն: Նա յուրաքանչյուր նախարարության Համար մեկական եպիսկոպոս է ձեռնադրություն: Այս եպիսկոպոսները ենթակա էին Հայոց եպիսկոպոսին, որ շուտով տատանում է Հայոց Հայրապետ անունը: Այսպիսով Հայաստանի եկեղեցու նվիրապետական կառուցվածքը կազմագործում է ինքնուրույն ծանապահություն պայմաններից և անկախ այն ընթացից, որ ունեցավ եկեղեցու Հռոմեական կայսրության մեջ, ուր 325 թ. Նոկեայի և Տիեզերական ծողովում Հաստատվեց միտրոպոլիտական սիստեմը, իսկ 381 թ. Կ. Պոլիսի Բ Տիեզերական ծողովում պատրիարքականը:

Ստ. Օրբելյանը /թ՛ դ./, վկայակոչելով Սամվել Կամրջաձորեցուն /թ՛ դ./ ասում է, որ Ս. Գրիգոր Լուսավորիչը Հաստատեց 36 եպիսկոպոսություններ, որոնց գահականները նստում էին Հետեւյալ կերպ. 18-ը աջից և 18-ը ձախից: Ընդ որում աջից առաջինը Հարքի եպիսկոպոսն էր, յոթերորդը՝ Սյունյաց, իսկ ձախից առաջինը՝ Բասենի եպիսկոպոսը /գլ. է/: Համար Օրբելյանի այլ վկայությունների Ս. Գրիգորը իր մերձավոր աշակերտներից մեկին՝ Գրիգորիս անունով, եպիսկոպոս է ձեռնադրություն Սյունյացի վրա /գլ. ն/. իսկ Մովսես Տարոնեցուն՝ Գողթնի /գլ. թ/։ Հետեւյալ արդեն, որ Հայերեն Ազանթագեղուը հիշում է քրմերի զավակներից սերպաշտ 12 եպիսկոպոսների անուններ, իսկ Ս. Գրիգորի հունարեն Վարքը զուգահեռար տալիս է նաև այդ եպիսկոպոսների աթոռների անունները ըստ Հետեւյալի:

Աղբիանու՝ Բագրեանդի և Արշարունյաց,  
Եպտաղիու՝ Բասենի և Կոտայքի?՝,  
Մովսես՝ Եկեղեցաց և Դերջանի,  
Եպսերիու՝ Դարանեղյաց,  
Հովհաննես՝ Կարինի,  
Ագապես՝ Սպերի և Ասպարապետության տան,  
Աղբենու՝ Տարոնի, Տայոց և Մամիկոնյան տան\*,  
Արտիթենու՝ Խորոնունիների տոհմի,  
Արսուկես՝ Շիրակի,  
Անտիքենու՝ Կորդվաց աշխարհի,  
Տիրիկես՝ Վահանդաշհուրի, Արեղյան և Գաբեղյան տոհմերի,  
\*Հայերեն Ազանթագեղուը Աղբենու որ առնարեն հիշում է Բասոս եպիսկոպոսի անունը:

## ԵԶՆԻԿ Բահանակ ՊԵՏՐՈՍՅԱՆ

**Կիրակոս՝ Արքամունյաց երկրի:**

Այստեղ Հիշատակված Աթոռները Հիմնականում գտնվում են Հայաստանի արևմտյան նահանգներում, իսկ եպիսկոպոսներից հրչված են միայն նախկին քրծերի զավակները: Բնականարար Ա. Գրիգոր Լուսավորիչը եպիսկոպոսությունները է Հաստատել նաև Հայաստանի մասցայլ զավակներում, որոնց անունները, բացի վերոհիշյալներից չեն պահպանվել: Վատահարար կարող ենք ասել միայն, որ Ա. Գրիգոր Լուսավորչի ձեռամբ Հայաստանում Հաստատվում են ավելի քան 30 եպիսկոպոսություններ:

Մի քանի տասնամյակ անց, օրինակ, Ա. Ներսես Մեծ Հայրապետի ձեռնադրության առթիվ, 353 թվականին Ա. Ներսեսին գեղի Կեսարիա՝ ձեռնադրելու համար, ուղեկցողների մեջ եղել են 28 եպիսկոպոսներ, որոնցից անվանապես Հրչվում են հետեւյալները:

Գրիգոր եպիսկոպոս Այունյաց,

Փառեն եպիսկոպոս Վրաց,

Թաթուլ եպիսկոպոս Տարոնի,

Հովսեփ եպիսկոպոս Բագրատունյաց,

Քաջաջ եպիսկոպոս Մարգղետական,

Ամովս եպիսկոպոս Բգնունյաց,

Ներսես եպիսկոպոս Մոկաց,

Շապուհ եպիսկոպոս Արքունյաց,

Արեսովոմ եպիսկոպոս Անձնացյաց,

Վահան եպիսկոպոս Մամիկոնյանների,

Զավեն եպիսկոպոս Յուրտավի,

Տրդատ եպիսկոպոս Բասենի,

Գևել եպիսկոպոս Մելքոնիի /Սոփերք Զ էջ 25-26/:

